նըս՝ հաստատէին զեկեղեցի Աստուծոյ ի կայարանի Խաչին, զոր հին եկեղեցի տեղւոյն անուանէին, որում Գիսն կոչեն։ Այլ և յետ բազում ժամանակաց վեհազգի ոմն իշխան Վարազպերոժ անուն՝ յՌուանշահիկ տոհմէ, կամեցեալ նորոգել զհին եկեղեցին և ոչ կարէր քակել զաղիւսաշատ պոյր զմբեթին, զի բնակեալ էր անդ Խաչն տէրունական և նշխարք վկայիցն։

Գլ. իը.

Յետ սրբոյն Մաշտոցի սուղինչ անցեալ ժամանակ՝ նորին աշակերտեալքն որք ի կողմանս գաւառացն Աղուանից, գումարեալք ի մի վայր յազդմանէ սուրբ Հոգւոյն և խորհրդազգացք լինելով՝ փութային հասանել գործոց բարեաց։ «Զինչ մեք արասցուք աւեն, զի որ մեր լուսաւորութեան էր առիթ՝ ննջեաց ի Քրիստոս, և ահա ի նմանէ մնացեալ եմք որբք. եկայք եղբարք յԱստուածային ի քաղաքն Երուսաղէմ երթիցուք և ի նոցանէ խնդրեսցուք մեզ առաջնորդ, զի բնական լուսաւորութեան երկրիս արևելից ի ձեռն սրբոյն Եղիշայի յԵրուսաղէմէ եղեալ է սկիզբն»։ Յայնժամ հանդերձեցան, կազմեցան յերիս բաժանեալ գունդս, և համբարձեալ ի կողմանցն Աղուանից՝ յառաջ խաղային առ սահմանօք Ասորեստանի և երթեալ հետևողաբար յԵրուսաղէմեան հասանէին քաղաքն և մտեալ յաստուածաբնակ Եկեղեցին՝ երկրպագանէին ամենակեցոյց Փայտին Կենաց։ Եւ հանդիպեցան հոգեզուարճ աստուածազարդ Հայրապետին, տուեալ ողջոյն եկեղեցւոյն՝ խոնարհամիտ համբուրիւ ընկալեալ ի նոցանէ լինէին։ Եւ զջան քրտանց Սրբոյն Մաշտոցի բովանդակ պատմէին առաջի սրբոյ Հայրապետին, եթէ զինչ գունակ սքանչելեօք առ բարբարոսականսն կատարեալ լինէին ուղղութիւնք։ Զոր լսելով նոցա, մեծաւ խնդութեամբ ընկալեալ՝ բազում մեծարանս ցուցանէին խնամով, և առնէին անդ աւուրս բազումս՝ յարելով յինքեանս արս երիս աստուածասէր քահանայս, որոց առաջինն Աթանասիոս, զնոսա ողոքական բանիւք հաւանեցուցանէին գալ ընդ իւրեանս, զի առաջնորդութեան զնոսա վիճակեցուսցեն աշխարհին իւրեանց։ Եւ կատարեալ նոցա զերկրպա-